

ՎԵՂՈՒ ՁՐԱՍԹԱՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՁՖԳ ՎԱՐԿ No. CAM 1002 01 Y

ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿՈՂՄԻՑ

ՀԱՏՈՒԿ ԵՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Մարտ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ.....
ԱՆԿԱՆ ԱՌԻԳԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....
Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն.....
Ըստ ծրագրի բաղադրիչների ֆունդերի օգտագործման մասին հաշվետվություն.....
1. <u>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>	9
2. <u>ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԶԱԴԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ</u>	11
3. <u>ԱՌՀԱՆՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓ</u>	2
4. <u>ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԻ ՀԱՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ</u>	2
5. <u>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ</u>
6. <u>ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ</u>
7. <u>ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ</u>	14
8. <u>ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>
9. <u>ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ</u>
10. <u>ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ</u>

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՀ) ղեկավարությունը պատասխանատու է ՉՖԳ No. CAM 1002 01 Y Վարկային համաձայնագրով ֆինանսավորվող (Վարկային Համաձայնագիր) “Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրի” (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որը ճշմարիտ է ներկայացնում 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների մուտքերը և վճարումները, ինչպես նաև ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործումը՝ համաձայն Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով ՀՀՀՀՄ ստանդարտի:

Հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ՀՏՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է.

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Ներկայացնել տեղեկատվությունը, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այնպես որ այն լինի արժանահավատ, համադրելի ու հասկանալի,
- Ներկայացնել լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն 31.12.2023թ.-ի վերաբերյալ:

ՀՏՀ-ի ղեկավարությունը նաև պատասխանատու է.

- Մշակելու, ներդնելու ու պահպանելու ներքին հսկողության արդյունավետ համակարգ,
- Կատարելու հաշվապահական հաշվառման պատշաճ գրանցումներ, որոնք բավարար են ներկայացնելու ու պարզաբանելու գործարքները, և որոնք հնարավորություն են տալիս հիմնավորել, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով ՀՀՀՀՄ ստանդարտի և ՉՖԳ ուղեցույցի,
- Ձեռնարկել հնարավոր միջոցներ Ծրագրի ակտիվների պահպանման նպատակով, և ապահովել, որ ֆոնդերն օգտագործվել են Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ՉՖԳ համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են, և
- Կանխարգելել և բացահայտել խարդախությունը կամ այլ սխալները:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են ՀՏՀ ղեկավարության կողմից 2024թ. մարտի 27-ին:

Սարգիս Բաղինյան

Կարինե Շահբազյան

Գործադիր Տնօրեն

Գլխավոր ֆինանսիստ - ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման վարչության պետ



Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամ

ԱՆԿԱԽ ԱՌԴԻՑՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ՉՖԳ No. CAM 1002 01 Y Վարկային համաձայնագրով (“Վարկային համաձայնագիր”) ֆինանսավորվող և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից (<ՏԶ<) միջոցով իրականացվող “Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրի” (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն “Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով” Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (<<<<ՄՍ-դրամային սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* պարբերությունում:

Մենք անկախ ենք Ծրագրից և <ՏԶ<-ից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնադրքի (<ԷՄՍԽ կանոնադրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Հանգամանքի շեշտադրում – Ծրագրի իրականացման դանդաղ ընացք

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությանն ենք հրավիրում հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունների ծնթ. 9.2-ին, որը նկարագրում է ծրագրի իրականացման դանդաղ ընացքը:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է Հաշվապահների Միջազգային Դաշնության (<ՄԴ>) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (<<<<ՄՍԽ) կողմից հրապարակված “<<<<ՄՍ-դրամային միջոցների սկզբունք” ստանդարտի համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի յրոմն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային Համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարությանը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Չարգացման Ֆրանսիական Գործակալության (ՉՖԳ) միջև 2016թ. հունվարի 26-ին կնքված Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ՉՖԳ համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Առհանման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Առհանման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային Համաձայնագրի:

3. Ծրագրի հաշիվը վարվել է համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և ՉՖԳ համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և ՉՖԳ համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ծրագրի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

Վահագն Սահակյան, FCC
Տնօրեն

“Բի-Ղի-Օ Արմենիա” ՓԲԸ
Երևան
27 մարտի, 2024թ.



ՎԵՂՈՒ ԶՐԱՄՔԱՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱՎԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
 ԶՖԳ Վարկ No. CAM 1002 01 Y

Գրանական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
 (Ելքային)

	Փաստացի		Նախատեսված		Ենթամ		ԾԳՓ
	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2023թ.	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2023թ.	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2023թ.	
Գրանական միջոցների սկզբնական մնացորդ							
Ծրագրի հաշիվ (ԶՖԳ վարկ)	5,348,122.70						
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)	5,348,122.70						
Ֆոնդերի արդյունքներ							
ԶՖԳ Վարկ No. CAM 1002 01 Y	10.1	70,000,000.00					75,000,000.00
ՀՀ Կառավարության հանաֆինանսավորում	10.2	879,274.36	13,864,202.05				15,004,358.00
Ընդամենը		879,274.36	83,864,202.05				90,004,358.00
Արտարժույթային օգուտ/(կորուստ)		(16,055.84)	(31,956.99)				
Ֆոնդերի օգտագործում	9						
1. Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, գործարանական ծախսեր:		4,924,445.82	82,545,349.66	5,336,110.60	82,957,014.44	(411,664.78)	90,004,358.00
Ընդամենը ծրագրային ծախսեր		4,924,445.82	82,545,349.66	5,336,110.60	82,957,014.44	(411,664.78)	90,004,358.00
Գրանական միջոցների վերջնական մնացորդ	6						
Ծրագրի հաշիվ (ԶՖԳ վարկ)		1,286,895.40	1,286,895.40				
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)		-	-				
Ընդամենը		1,286,895.40	1,286,895.40				

Սարգիս Բաղիկյան
 Գործադիր Տնօրեն



Կարինե Ճահրազյան
 Գլխավոր ֆինանսիստ-ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման վարչության պետ

Հայաստանի տարածքային զարգացման կառավարման հիմնադրամ
 27 մարտի, 2024
 Ծանոթագրությունների 9-15 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

ՎԵՐՈՒ ՋՐԱՄԲԱՐԻ ԵՎ ՈՌՈՂՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ
 ԶՖԳ Վարկ No. CAM 1002 01 Y

Ըստ բաղադրիչների ֆունդերի օգտագործման մասին հաշվետվություն
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
 (Եկամ)

Բաղադրիչ	Փաստացի		Նախատեսված		Ընդամ		ԾԳՓ
	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2023թ.	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2023թ.	Հաշվետու տարի	Անդրական առ 31.12.2023թ.	
Բաղադրիչ 1. Վերու ջրամբարի և օժանդակ կառուցվածքների շինարարություն	4,032,742.46	80,597,430.22	4,416,987.53	80,981,675.29	(384,245.07)	(384,245.07)	77,185,592.00
Բաղադրիչ 2. Ոռոգելի մակերեսի վերականգնում, արդիականացում, ընդլայնում	718,272.28	1,129,735.53	718,272.28	1,129,735.53	-	-	11,939,166.00
Բաղադրիչ 3. Ճրագրի իրականացում	173,431.08	818,183.91	200,850.79	845,603.62	(27,419.71)	(27,419.71)	879,600.00
Ընդամենը ծրագրային ծախսեր	4,924,445.82	82,545,349.66	5,336,110.60	82,957,014.44	(411,664.78)	(411,664.78)	90,004,358.00


Սարգիս Բաղինյան
 Գործադիր Տնօրեն


Կարինե Շահրազյան
 Գլխավոր ֆինանսատ-ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման վարչաբաժնի պետ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
 27 մարտի, 2024

Ծանոթագրությունների 9-15 էջերը կազմում են այս հատուկ մպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

2016թ. հունվարի 26-ին Հայաստանի Հանրապետության և Չարգացման Ֆրանսիական գործակալության (ՉՖԳ) միջև ստորագրվել է No. CAM 1002 01 Y վարկային համաձայնագիրը, համաձայն որի ՉՖԳ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել է 75,000,000 եվրո գումարը չգերազանցող վարկ:

Վարկը տրամադրվել է ֆինանսավորելու մի քանի ջրամբարների կառուցումը, մասնավորապես Հայաստանի Արարատի դաշտավայրում գտնվող Վեղի ջրամբարի, ազգային գյուղական ոռոգման համակարգի կայունությունը բարելավելու նպատակով:

Գլխավոր համաձայնագրի “Ֆինանսավորման պլան” հավելվածում ՉՖԳ կողմից ֆինանսավորման ծախսերի նախահաշիվը կազմել է 75,003,631 եվրո:

Վարկը տրամադրվել է “Վեղու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագրի” (Ծրագիր) իրականացման նպատակով:

Ծրագիրը արդյունավետ է դարձել 2016թ. մայիսի 12-ին: Ծրագրի տեխնիկական ավարտը սահմանված է 2022թ. մարտի 31-ը: ՉՖԳ No.CAM 1002 01 Y վարկի առհանման դիմումների ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 2022թ. մայիսի 31-ը, իսկ կատարված աշխատանքների և ծառայությունների դիմաց վերջնական վճարումների համար վերջնաժամկետը 2022թ. նոյեմբերի 30-ն է:

Համաձայն CAM 1002 01 Y վարկային համաձայնագրի 2022թ. Մայիսի 28-ի թիվ 1 լրացման, Ծրագրի տեխնիկական ավարտի ժամկետը երկարացվել է մինչև 2023թ. հուլիսի 31-ը, վարկի առհանման դիմումների ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 2023թ. սեպտեմբերի 30-ը, իսկ կատարված աշխատանքների և ծառայությունների դիմաց վերջնական վճարումների համար վերջնաժամկետը սահմանվել է 2024թ. Մարտի 30-ը:

Համաձայն CAM 1002 01 Y վարկային համաձայնագրի 2023թ. Հուլիսի 28-ի թիվ 2 լրացման, Ծրագրի տեխնիկական ավարտի ժամկետը երկարացվել է մինչև 2024թ. Դեկտեմբերի 31-ը, վարկի առհանման դիմումների ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 2021թ. Մայիսի 31-ը առաջին փոխանցման համար, 2023թ. Սեպտեմբերի 30-ը երկրորդ փոխանցման համար և 2025թ. Մարտի 1-ը երրորդ փոխանցման համար, իսկ կատարված աշխատանքների և ծառայությունների դիմաց վերջնական վճարումների համար վերջնաժամկետը սահմանվել է 2025թ. Սեպտեմբերի 1-ը:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է բարելավել ջրային ռեսուրսների և ոռոգվող գյուղատնտեսության կայունությունը բերրի արարատյան հարթավայրում.

ա) ապահովել հավելյալ վերականգնվող ջրային ռեսուրսներ Վեղու ջրամբարի կառուցման միջոցով,

բ) բարելավել ոռոգման արդյունավետությունը ցանցի վերանորոգման և արդիականացման միջոցով:

Վերացնելով ջրային և ոռոգման ցանցերի սահմանափակումները՝ ծրագրի նպատակն է վերացնել Արարատյան հարթավայրում գյուղատնտեսական հողերը լքելու միտումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Վեղու ջրամբարի և օժանդակ կառուցվածքների շինարարություն.

Բաղադրիչ 2. Ոռոգելի մակերեսի վերականգնում, արդիականացում, ընդլայնում.

Բաղադրիչ 3. Ծրագրի իրականացում:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- ԶՖԳ No. CAM 1002 01 Y վարկ - ծախսերի ֆինանսավորում 100%՝ բացառությամբ հարկերի,
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն)– հարկերի ֆինանսավորում:

Կատեգորիա	ԶՖԳ No. CAM 1002 01 Y վարկ	ՀՀ Կառավարություն	Ընդամենը
	ԵՎՐՈ	ԵՎՐՈ	ԵՎՐՈ
1. Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, գործառնական ծախսեր:	75,000,000.00	15,004,358.00	90,004,358.00
Ընդամենը	75,000,000.00	15,004,358.00	90,004,358.00

Առհանման հայտեր

Վարկի տրամադրումը կատարվում է առհանման հայտերի հիման վրա կանխավճարների ձևով: Առաջին առհանման հայտը ներառում է. ա) թույլատրելի ծախսերի վերաֆինանսավորման համար պահանջվող գումարը և բ) սահմանված նախնական կանխավճարի համար պահանջվող գումարը:

Հետագա կանխավճարները տրվում են պայմանով, որ առհանման հայտում նշված կանխավճարին անմիջապես նախորդող կանխավճարի առնվազն 80%-ը և նախավերջին կանխավճարի 100%-ը օգտագործվել են:

1.4. Ծրագրի իրականացում

Մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը Ծրագիրը իրականացվել է ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ (ՋՏ ԾԻԳ) կողմից:

2019թ. դեկտեմբերի 30-ից դադարեցվել է ՋՏԾԻԳ-ի գործունեությունը՝ համաձայն 2019թ. փետրվարի 28-ի թիվ 170-Ն ՀՀ Կառավարության որոշման: ՋՏԾԻԳ-ի փոխարեն Ծրագրի իրականացման գործառույթները շարունակելու է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ կառուցվածքային ստորաբաժանման միջոցով: 2020թ. Հունվարի 14-ին այդ նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ստեղծվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ (ՀՏՁ Հ ՋՏ ԾԻՄ):

Համաձայն 25.08.2023 Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի անցկացված հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրության Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի նոր կառուցվածքը հաստատվել է, ինչպես նաև որոշում է կայացվել դադարեցնել ՀՏՁ Հ ՋՏ ԾԻՄ-ի գործունեությունը և այդ սեկտորի ծրագրերը շարունակվել են իրականացվել և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

ՀՏՁ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0037, Կարապետ Ուլունցի փ. 31շ.:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

2.2. Հաշվապահական հաշվառման դրամային միջոցներ հիմունք

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

2.3. Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը եվրոն է (EUR):

Տեղական արժույթով (ՀՀ դրամ, AMD) կատարված ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը և ծախսերը փոխարկվում են եվրոյի գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանած փոխարժեքով:

Փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը տեղական արժույթով պահվող դրամական միջոցների վրա ներկայացվում է առանձին տողով Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվության մեջ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 եվրոն = 447.90 դրամ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 եվրոն = 420.06 դրամ:

2.4. Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

2.5. Բյուջե

Ծախսերի բյուջեն կազմվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով պլանավորումը հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ըստ քարտեզային գնումների պլանի:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

3. Առհանման դիմումների ամփոփ

Հաշվետու ժամանակաշրջանում առհանման դիմումներ չեն ներկայացվել:

4. Ծրագրի հաշվի հաշվետվություն

Հաշվարկային հաշիվ	900000902255
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Մելիք-Աղամյան 1, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն,
Արժույթը	Եվրո

	ԶՖԳ No. CAM 1002 01 Y Վարկ	
	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
1. Սկզբնական մնացորդ	5,348,122.70	4,927,875.38
2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն	-	-
3. ԶՖԳ ֆոնդի կանխավճար/համալրում	-	7,000,000.00
4. Նվազեցում. Ծրագրի հաշվից մարում ԶՖԳ -ին	-	-
5. Ծրագրի հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը	5,348,122.70	11,927,875.38
6. Ծրագրի հաշվի վերջնական մնացորդ	1,286,895.40	5,348,122.70
7. Ավելացում. վճարված ընդունելի ծախսերի գումար	4,061,227.30	6,579,752.68
8. Նվազեցում. ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են Ծրագրի հաշիվ)	-	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	5,348,122.70	11,927,875.38
10. Տարբերություն (5)-(9)	-	-

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Հաշվետվությունը պատրաստված է հաշվեգրման սկզբունքով, որտեղ գործարքները ճանաչվում են կատարման պահին (այլ ոչ՝ ստացման կամ վճարման պահին):

		31.12.2023 Եվրո	31.12.2022 Եվրո
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ	6	1,286,895.40	5,348,122.70
Կանխավճարներ	7	1,148,726.89	1,165,514.65
Ընդամենը ակտիվներ		2,435,622.29	6,513,637.35
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կրեդիտորական պարտավորություններ	8	3,473,987.72	4,359,969.22
Ընդամենը պարտավորություններ		3,473,987.72	4,359,969.22
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Աճողական մուտքեր			
ԶՖԳ No. CAM1002 01 Y Վարկ	10.1	70,000,000	70,000,000.00
ՀՀ Կառավարություն	10.2	13,864,202.05	12,984,927.69
		83,864,202.05	82,984,927.69
Աճողական ծախսումներ			
Ծրագրի ծախսումներ		(84,556,478.66)	(80,504,409.29)
		(84,556,478.66)	(80,504,409.29)
Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(կորուստ)		(346,088.82)	(326,850.27)
Ընդամենը զուտ ակտիվներ		1,038,365.43	2,153,668.13

6. Դրամական միջոցներ

	Բանկ	Արժույթը	31.12.2023 Եվրո	31.12.2022 Եվրո
Ծրագրի հաշիվ (ԶՖԳ No. CAM 1002 01 Y) վարկ	Գանձապետարան	Եվրո	1,286,895.40	5,348,122.70
Ընդամենը			1,286,895.40	5,348,122.70

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

7. Կանխավճարներ

	31.12.2023	31.12.2022
	Եվրո	Եվրո
Շինարարական աշխատանքների գծով (ա)	1,148,726.89	1,164,250.31
Խորհրդատվական ծառայությունների գծով	-	-
Գործառնական ծախսերի գծով	-	1,264.34
	1,148,726.89	1,165,514.65

(ա) Կանխավճարները տրվել են շինարարական պայմանագրերի գնի 10%-ի կամ 20%-ի չափով: Կանխավճարները ապահովված են բանկային երաշխիքներով: Բանկային երաշխիքների ժամկետները սահմանված են մինչև աշխատանքների կատարման 90/100% կամ պայմանագրերի ժամկետի ավարտը: Կանխավճարները մարվում են յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից՝ էլնելով բանկային երաշխիքի կամ պայմանագրի պահանջներից:

8. Կրեդիտորական պարտավորություններ

	31.12.2023	31.12.2022
	Եվրո	Եվրո
Շինարարական աշխատանքների գծով (երաշխիքային գումարներ) (ա)	3,455,693.81	4,359,969.22
Խորհրդատվական ծառայություններ	18,293.91	-
	3,473,987.72	4,359,969.22

(ա) երաշխիքային գումարները պահվել են ներկայացված կատարողական ակտերից, 5%-ի կամ 10%-ի չափով (համաձայն կնքված պայմանագրերի դրույթների):

9. Ծրագրային ծախսեր

9.1. Ծրագրային ծախսերի բաշխումը ըստ ֆունդերի

Ծախսային հոդվածներ	2022թ.		
	ԶՖԳ No. CAM1002 01 Y Վարկ	ՀՀ Կառավարություն	Ընդամենը
	Եվրո	Եվրո	Եվրո
1.Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, գործառնական ծախսեր:	6,579,752.68	1,580,378.63	8,160,131.31
Ընդամենը	6,579,752.68	1,580,378.63	8,160,131.31
	Հաշվառու տարի		
1.Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, գործառնական ծախսեր:	4,061,227.30	863,218.52	4,924,445.82
Ընդամենը	4,061,227.30	863,218.52	4,924,445.82
	Կուտակային 31.12.2023թ. դրությամբ		
1.Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, գործառնական ծախսեր:	68,713,104.60	13,832,245.06	82,545,349.66
Ընդամենը	68,713,104.60	13,832,245.06	82,545,349.66

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

9.2. Ծրագրային ծախսերի բյուջեի կատարում

Ծախսային հոդված	Աճողական ծախսումներ 31.12.2023թ. դրությամբ	Ընդամենը բյուջե	Կատարում
	Եվրո	Եվրո	%
1. Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, գործառնական ծախսեր:	82,545,349.66	90,004,358.00	92%
Ընդամենը	82,545,349.66	90,004,358.00	92%

Սահակյանշինե ՓԲԸ և Պեգա Քոնստրաքշնե Մասնավոր բաժնետիրական ընկերություն հետ կնքված Վեղիի պատվարի և օժանդակ կառուցվածքների նախագծում և կառուցումն թիվ AFD/ICB/CW-15/001 առ 22.12.2016թ. պայմանագրի Համաձայնագիր 10-ի առ 08.11.2023թ.-ի համաձայն շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվել է 31 դեկտեմբեր 2023 թվականին:

Համաձայն ՀՀ Կառավարության 2023թ. Սեպտեմբերի 14-ի թիվ N1581-N որոշման՝ Կատարողին վճարումները իրականացվում են կիրառելով փոխարժեք՝ 1 եվրոյի համար 500 հայկական դրամ, այլ ոչ թե ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքը հաշիվ-ապրանքագրի/վճարման հավաստագրի օրվա դրությամբ:

ՀՀ կառավարությունը համաձայն այս որոշման որպես մեղմացուցիչ միջոց Կատարողին նաև տրամադրել է 1,6 մլրդ դրամի բյուջետային վարկ՝ պայմանագիրն ավարտելու նպատակով:

10. Ֆինանսավորում

10.1. Վարկ ՁՖԳ No. CAM 1002 01 Y

	Հաշվետու տարի Եվրո	2022թ. Եվրո	Աճողական առ 31.12.2023 Եվրո
Նախնական կանխավճար	-	-	10,000,000.00
Լրացուցիչ կանխավճար	-	7,000,000.00	60,000,000.00
Ընդամենը	-	7,000,000.00	70,000,000.00
Ընդամենը բյուջե			75,000,000.00
Առ 31.12.2023 տրամադրված ֆինանսավորում %			93%

10.2. ՀՀ Կառավարություն

	Հաշվետու տարի Եվրո	2022թ. Եվրո	Աճողական առ 31.12.2023 Եվրո
Ֆինանսավորում	879,274.36	1,535,303.41	13,864,202.05
Ընդամենը բյուջե			15,004,358.00
Առ 31.12.2023 տրամադրված ֆինանսավորում %			92%